ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետում «բնույթի» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ առցանց,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 243-րդ հոդվածում՝

- 1-ին մասում «իրականացմանը» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ դատական ակտով սահմանված պահանջներից որևէ մեկի չկատարումը,» բառերը,
- լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մաս՝

«2. Սույն հոդվածի իմաստով՝ այլ մերձավոր ազգական է համարվում երեխայի տատը, պապը, եղբայրը (այդ թվում՝ խորթ), քույրը (այդ թվում՝ խորթ), ծնողի քույրը կամ եղբայրը։»:

Հոդված 2. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 245.1-ին հոդված՝

«**Հոդված 245.1. Երեխայի որդեգրման միջնորդական գործունեություն իրականացնելը**

1. Երեխաների որդեգրման միջնորդական գործունեություն իրականացնելը՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի

ժամկետով:

2. Սույն հոդվածով քրեական պատասխանատվության ենթակա չեն Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ միջնորդական գործունեություն չհամարվող գործունեություն իրականացնող անձինք:»:

Հոդված 3. Օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-ին կետ՝

«8.1) անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող, բռնություն գործադրելու սպառնալիք պարունակող կամ սեռական բնույթի գործողություններ կամ առաջարկություններ նախատեսող՝ արհեստական բանականության միջոցով ստեղծված նյութ օգտագործելով,»:

Հոդված 4. Օրենսգրքի 300-րդ հոդվածի 5-րդ մասում «Սույն հոդվածով» բառերից հետո լրացնել «և սույն օրենսգրքի 202-րդ հոդվածով», իսկ «նմանակված» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ արհեստական բանականության միջոցով ստեղծված նյութում ներառված,» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաների կամ հաշմանդամություն ունեցող անձանց (երեխաների) խնամող հաստատություններում, ծերանոցներում» բառերը փոխարինել «բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ ընտանեկան միջավայրին մոտ տներում խնամք տրամադրող կազմակերպություններում» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին» բառերը փոխարինել «բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններին կամ ընտանեկան միջավայրին մոտ տներում խնամք տրամադրող կազմակերպություններին» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը: